Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1477-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում արձանագրված կենդանիների պարտադիր ծանուցման վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ վարակիչ հիվանդություն) ծանուցման և գրանցման հետ կապված հարաբերությունները։

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են՝

1) վարակիչ հիվանդության դեպք՝ կենդանու կամ դրա դիակի մոտ վարակիչ հիվանդության ախտորոշման լաբորատոր հաստատված դեպք.

2) վարակիչ հիվանդության առաջնային բռնկում՝ որոշակի տարածքում և ժամանակահատվածում տվյալ վարակիչ հիվանդության մեկ կամ ավելի դեպքերի արձանագրում, որը հիվանդության տեսակով պայմանավորված համաճարակային կապ չունի նույն տարածքում նախկինում կամ այլ տարածքում արձանագրված բռնկման հետ.

3) վարակիչ հիվանդության երկրորդային բռնկում՝ վարակիչ հիվանդության առաջնային բռնկման հետևանքով վարակիչ հիվանդության մեկ կամ ավելի դեպքերի արձանագրում միևնույն կամ այլ տարածքներում.

4) անապահով կետ՝ վարակիչ հիվանդության բռնկման վայրը՝ անասնապահական տնտեսություն, համայնքի տարածք։

3. Կենդանիների հիվանդացության և (կամ) մահացության դեպք արձանագրած անասնաբուժական ծառայության կողմից ախտաբանական նմուշների ստացումից հետո վարակիչ հիվանդության ախտորոշում իրականացնող լաբորատորիան անհապաղ տեղեկացնում է գյուղատնտեսության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին (այսուհետ՝ լիազոր մարմին)։

4. Հիվանդության բռնկման մասին լիազոր մարմնի կազմում գործող համապատասխան պետական տեսչությունը (այսուհետ՝ տեսչություն) 12 ժամվա ընթացքում կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպությանը ծանուցում է առաջնային բռնկումից և հիվանդության ախտորոշումից հետո, ընթացիկ՝ հիվանդության երկրորդային բռնկումների ընթացքում մինչև հիվանդության վերացումը, և եզրափակիչ՝ հիվանդության վերացումից հետո։ Ծանուցումը կատարվում է կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության կողմից հաստատված ՎԱՀԻՍ (WAHIS) էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով։

5. Տեսչությունը կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպությանը, վերջինիս կողմից սահմանված ձևերին համապատասխան, ներկայացնում է կիսամյակային ու տարեկան հաշվետվություններ հանրապետությունում արձանագրված և գրանցված հիվանդությունների մասին։

6. Վարակիչ հիվանդության գրանցման նպատակով ախտորոշում իրականացնող լաբորատորիան տեսչությանը ծանուցում է հիվանդության բռնկումից և ախտորոշման հաստատումից հետո 12-ժամվա ընթացքում։ Ծանուցումը ներառում է՝

1) տվյալներ հիվանդության բռնկման առաջին դեպքի մասին՝ նշելով ծանուցման ժամը, ամսաթիվը, տարեթիվը.

2) համայնքի և մարզի անվանումները.

3) հիվանդության անվանումը և հարուցչի տեսակը կամ տարատեսակը՝ հնարավորության դեպքում.

4) համայնքում և մարզում համաճարակային բռնկման հերթական համարը.

5) համաճարակային բռնկման այն հերթական համարը, որը կասկածվում է որպես վարակի առաջնային օջախ.

6) համաճարակային բռնկման բնորոշումը՝ ըստ տարածվածության.

7) բռնկման վայրի անվանումը, աշխարհագրական տվյալները.

8) կարանտինային կամ սահմանափակումների գոտու տարածքները.

9) հիվանդության ախտորոշման ամսաթիվը և տարեթիվը.

10) հիվանդության վարակի օջախը.

11) հիվանդության ներթափանցման մոտավոր ժամկետը և ուղիները.

12) ձեռնարկված սահմանափակումները.

13) հիվանդության բռնկման ընթացքում հիվանդացած և անկած կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանիների տեսակի (տավար, խոզ, ոչխար, այծ, թռչուն, միասմբակավորներ, ձկներ, վայրի կենդանիներ).

14) հիվանդության նկատմամբ ընկալունակ կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանիների տեսակի (տավար, խոզ, ոչխար, այծ, թռչուն, միասմբակավորներ, ձկներ, վայրի կենդանիներ).

15) հիվանդության բռնկման ընթացքում հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանիների տեսակի (տավար, խոզ, ոչխար, այծ, թռչուն, միասմբակավորներ, ձկներ, վայրի կենդանիներ).

16) հիվանդության բռնկման ընթացքում ոչնչացված կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանիների տեսակի (տավար, խոզ, ոչխար, այծ, թռչուն, միասմբակավորներ, ձկներ, վայրի կենդանիներ)։

7. Սույն կարգի 6-րդ կետում սահմանված տեղեկությունների հիման վրա տեսչությունը վարում է կենդանիների վարակիչ հիվանդությունների գրանցամատյան, որի ձևը հաստատում է լիազոր մարմինը։

8. Հիվանդության երկրորդային նոր բռնկումների մասին, որոնք արձանագրվել են մինչև նախորդ շաբաթվա վերջին օրվա կեսգիշերը, անասնաբուժական ծառայությունը լիազոր մարմնին ծանուցում է մինչև հիվանդության վերացումը, յուրաքանչյուր շաբաթվա առաջին աշխատանքային օրը: Եթե սահմանված տեղեկությունները չեն ներկայացվել, ապա հիվանդության երկրորդային նոր բռնկում չի եղել:

9. Հիվանդությունների վերացմանն ուղղված կարանտինը կամ սահմանափակումները հանելուց հետո անասնաբուժական ծառայությունը լիազոր մարմնին ծանուցում է 12 ժամվա ընթացքում: Ծանուցումը ներառում է՝

1) ծանուցման ժամը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը.

2) համայնքի և մարզի անվանումները.

3) հիվանդության անվանումը.

4) կարանտինը կամ սահմանափակումները հանելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը.

5) առողջացված անապահով կետերի քանակը.

6) վարակված կենդանիների քանակը՝ ըստ կենդանու տեսակի (տավար, խոզ, ոչխար, այծ, թռչուն, միասմբակավորներ, ձկներ, վայրի կենդանիներ).

7) ոչնչացված կենդանիների քանակը՝ ըստ կենդանու տեսակի (տավար, խոզ, ոչխար, այծ, թռչուն, միասմբակավորներ, ձկներ, վայրի կենդանիներ).

8) սպանդի ենթարկված կենդանիների քանակն՝ ըստ կենդանու տեսակի (տավար, խոզ, ոչխար, այծ, թռչուն, միասմբակավորներ, ձկներ, վայրի կենդանիներ).

9) բուժման ենթարկված կենդանիների քանակը՝ ըստ կենդանու տեսակի (տավար, խոզ, ոչխար, այծ, թռչուն, միասմբակավորներ, ձկներ, վայրի կենդանիներ).

10) առողջացած կենդանիների քանակը՝ ըստ կենդանու տեսակի (տավար, խոզ, ոչխար, այծ, թռչուն, միասմբակավորներ, ձկներ, վայրի կենդանիներ).

11)պատվաստված կենդանիների քանակը՝ ըստ կենդանու տեսակի (տավար, խոզ, ոչխար, այծ, թռչուն, միասմբակավորներ, ձկներ, վայրի կենդանիներ).

12) օգտագործված ախտահանիչի տեսակը և խտությունը.

13) ախտահանված մակերեսը (մ^2)։

10. Լիազոր մարմինը հիվանդության առաջնային և (կամ) երկրորդային բռնկումների արձանագրման, հիվանդության վերացմանն ուղղված կարանտինի կամ սահմանափակումների կիրառման կամ հանելու մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային, տեղական ինքնակառավարման և շահագրգիռ այլ մարմիններին։

11. Հիվանդության առաջնային բռնկումից մինչև հիվանդության վերացումը՝ անասնաբուժական ծառայությունը լիազոր մարմնին, մինչև հաջորդող ամսվա 5-ը, ներկայացնում է ամենամսյա հաշվետվություններ տվյալ մարզի տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների բռնկումների արձանագրման մասին։

12. Կենդանիների վարակիչ հիվանդությունների բռնկումների արձանագրման հաշվետվությունում ներառվում են՝

1) հիվանդության անվանումը.

2) նապահով կետերի քանակը.

3) առողջացված անապահով կետերի քանակը.

4) անապահով մնացած կետերի քանակը.

5) հիվանդության նկատմամբ ընկալունակ կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանու տեսակի.

6) հիվանդացած կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանու տեսակի.

7) անկած կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանու տեսակի.

8) ոչնչացված կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանու տեսակի և դիակների ոչնչացումն ավարտելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը.

9) հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանու տեսակի, և հարկադիր սպանդն ավարտելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը.

10) բուժման ենթարկված, այդ թվում՝ պատվաստված, շիճուկաբուժված կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանու տեսակի.

11) առողջացած կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանու տեսակի։

13. Անասնաբուժական ծառայությունը, մինչև հաջորդող ամսվա 10-ը, լիազոր մարմնին ամենամսյա հաշվետվություններ է ներկայացնում տվյալ մարզի տարածքում հիվանդությունների նկատմամբ իրականացված անասնահակահամաճարակային միջոցառումների մասին։

14. Անասնահակահամաճարակային միջոցառումների մասին հաշվետվությունը ներառում է՝

1) անասնահակահամաճարակային միջոցառման անվանումը.

2) պատվաստված կամ հետազոտված կամ բուժման ենթարկված կենդանիների գլխաքանակը՝ ըստ կենդանիների տեսակի.

3) օգտագործված անասնաբուժական դեղամիջոցի տեսակը և քանակությունը.

4) միջոցառման ընթացքում օգտագործված անասնաբուժական դեղամիջոցի խոտանված քանակությունը, չօգտագործված մնացորդային քանակությունը։

15. Լիազոր մարմինն ամփոփում է սույն կարգի 11-րդ և 13-րդ կետերով սահմանված հաշվետվությունները, և տեղեկատվություն ներկայացնում համապատասխան մարմիններին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ